## ՄԱՀՀԻ-ի մասին

ՄԱՀՀԻ
AIISA
Միջազգային եւ անվտանգության հարցերի հայկական ինստիտուտ
The Armenian Institute of International and Security Affairs

Միջազգային և անվտանգության հարցերի հայկական ինստիտուտը (ՄԱՀՀԻ, https://aiisa.mysite.am/hy) Երևանում գործող անկախ հետազոտական ինստիտուտ է, որի նպատակն է խթանել մարդու իրավունքների, քաղաքական ազատությունների և ազատ շուկայի ընդհանուր արժեքների վրա հիմնված Հայաստանի անկախ արտաքին և ներքին քաղաքականությունների վերլուծությունը:

Ինստիտուտը հիմնադրվել է 2014 թվականին Երևանում՝ կենտրոնանալով քաղաքական, ռազմական, տեխնոլոգիական, բիզնես, տնտեսական, իրավական, սոցիալական, կրոնական, բնապահպանական, և այլ զարգացումների վրա, որոնք կարող են ազդեցություն ունենալ Հայաստանի արտաքին և անվտանգության քաղաքականության, ինչպես նաև կարևոր ռազմական չափում ունեցող հակամարտությունների հեռանկարների, ընթացքի և հետևանքների վրա:

ՄԱՀՀԻ-ի առաքելությունն է իրականացնել հետազոտություններ, ոչ ֆորմալ կրթության, տեղեկատվական արշավների և այլ տեսակի գործունեություն անվտանգության, հակամարտությունների և խաղաղության վերաբերյալ, տրամադրել վերլուծություններ և առաջարկություններ Հայաստանի արտաքին և ներքին քաղաքականությունների վերաբերյալ, նպաստել տարածաշրջանային և ներքին հակամարտությունների, միջազգային ու ներազգային հարաբերությունների կողմերի միջև երկխոսությանը և կարողությունների զարգացմանը, խթանել հնարավորինս լավագույն օբյեկտիվ տեղեկատվության տարածումը և ազդել միջազգային խաղաղության և անվտանգության, ներքին ժողովրդավարական կայունության, ինչպես նաև քաղաքակիրթ միջազգային հարաբերությունների պահպանման և առաջխաղացման համար առողջ քաղաքականության ընդունման վրա:

Որպես ինստիտուցիոնալ նախաձեռնություն, ինստիտուտը նախատեսված է ծառայելու իբրև կարևորագույն գլոբալ, տարածաշրջանային և երկրին բնորոշ մարտահրավերների և հնարավորությունների անկախ և խիստ վերլուծության աղբյուր, դրանց վերաբերյալ համապարփակ և տեղեկացված քննարկման հարթակ, ինչպես նաև՝ ազդեցիկ և նորարարական գաղափարներ առաջարկելու որոշում կայացնողներին և ձևավորողներին՝ մոտակա և երկարաժամկետ հեռանկարում դրանց լուծման լավագույն եղանակների վերաբերյալ:

Այս նպատակներին հասնելու համար ՄԱՀՀԻ-ն ներգրավում է պետական պաշտոնյաներին, մասնավոր հատվածին, քաղաքացիական հասարակությանը և երիտասարդությանը բաց քննարկումների և ոչ պաշտոնական քննարկումների մեջ, իրականացնում է Հայաստանի առջև ծառացած մարտահրավերների վերաբերյալ արդիական քաղաքականության հետազոտություններ, ստեղծում է հետազոտողների, քաղաքականության մշակողների, բիզնեսի ներկայացուցիչների և քաղաքացիական ակտիվիստների

համագործակցային ցանցեր, տարածում է իր արդյունքները, վերլուծությունները և թեմաների վերաբերյալ իր պատկերացումները հրապարակումների և հանրային միջոցառումների կանոնավոր հոսքի միջոցով:

Հիմնադրման պահից՝ իր գործունեության 10 տարիների ընթացքում արդարադատության, հանցավորության և ներքին անվտանգության ոլորտներում ՄԱՀՀԻ հետազոտական, կրթական և տեղեկատվական ծրագրերը և գործունեությունը դրսևորվել է հետևյալ բաղադրիչներում:

1. ՄԱՀՀԻ «Հանցավորություն, արդարադատություն և ներքին անվտանգություն» ծրագիրը սեփական 10 ծրագրերից մեկն է, որի շրջանակներում կատարվել են մի քանի տասնյակ ծավալուն հետազոտություններ ՀՀ, ԼՂՀ սահմանադրական ճարտարապետության ու անվտանգության կապի, դատաիրավական բարեփոխումների ու իրավական ամենատարբեր հարցերի վերաբերյալ, ծրագրում ընդգրկված ՄԱՀՀԻ փորձագետների կողմից լրատվամիջոցներով տրվել են հազարավոր հարցազրույցներ: Հետազոտողների ուշադրության կենտրոնում են եղել միգրացիայի, քաղաքացիության, վիզաների ազատականացման խնդիրները:
2. 2022-26թթ. ԱՄՆ ժողովրդավարության աջակցության հիմնադրամի ֆինանսավորմամբ իրականացվող «Ժողովրդավարություն, արտաքին քաղաքականություն և անվտանգություն» ծրագրի առանձին ենթածրագիր է եղել «Դատաիրավական բարեփոխումներ և վեթինգ» ծրագիրը, որի շրջանակներում իրականացվել է աղմկահարույց դատավարությունների, քրեական գործերի մշտադիտարկում, ուսումնասիրվել են մի քանի տասնյակ դատավորների եկամուտների հայտարարագրեր և դրանց հիման վրա հրապարակվել հոդվածներ, մի շարք քաղաքացիական ու քրեական գործերով պատրաստվել կարգապահական վարույթների դիմումներ, որոնք ուղարկվել են ՀՀ Արդարադատության նախարարություն, ԲԴԽ և բարեվարքության քննության այլ իրավասու մարմինների, ՄԱՀՀԻ-ում կազմակերպվել են առանց հղումների և ուղիղ հեռարձակվող կլոր-սեղան քննարկումներ ՀՀ իրավապահ համակարգի բարձրաստիճան ներկայացուցիչների, արդարադատության նախարարի, փոխնախարարի և այլ ստորաբաժանումների ղեկավարների, տեղացի ու օտարերկրյա փորձագետների մասնակցությամբ, փորձագիտական խորհուրդը կազմող փաստաբանների, իրավագետների մասնակցությամբ թողարկվել մի քանի տասնյակ պոդքասթներ:
3. 2022թ. Facebook սոցիալական ցանցում Ինստիտուտը վարում է «Վեթինգը գործողության մեջ. հանրային-քաղաքացիական ճակատ հանուն վեթինգի» բաց խումբը, որին անդամակցում են հազարավոր օգտատերեր և որտեղ ամենօրյա կանոնավոր ռեժիմով տեղադրվում են հանրային ուշադրության առարկա հանդիսացող դատաքննությունների, քրեական գործերի, կոռուպցիայի մասին նյութեր:
4. Ա.Բայանդուր անվան Առաջնորդության ակադեմիայի «Ժողովրդավարության երեկոյան դպրոցի» և «Ժողովրդավարության տարածաշրջանային դպրոցների» շրջանակներում համապատասխանաբար 15 և 2 օրյա դասընթացնում շուրջ 600 շրջանավարտների համար պարտադիր ներառված են եղել սահմանադրաիրավական, ներքին անվտանգության հարցերի վերաբերյալ դասախոսություններ ՄԱՀՀԻ ասոցացված ու գործընկեր փորձագետների բանախոսությամբ: Երիտասարդ հետազոտողների կողմից հաճախ ընտրվել են իրավական թեմաներ ու հեղինակվել հոդվածներ, որոնք տպագրվել են ՀՀ առաջատար լրատվամիջոցներում:
5. Միջազգային իրավական թեմաներում ՄԱՀՀԻ-ն իր ասոցացված ու գործընկեր փորձագետներով առանցքային դերակատարում է ունեցել Հռոմի կանոնադրության վավերացման ներպետական քննարկումներում, տեղեկատվական արշավում, ինչպես նաև միջազգային ու ազգային լսարանների համար հրապարակել զեկույցներ Արցախյան հակամարտության գոտում ու Հայաստանի տարածքում տեղի ունեցած պատերազմի հանցագործությունների մասին:

Ստյոպա Սաֆարյան
ՄԱՀՀԻ հիմնադիր և տնօրեն